ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«03» 01 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000004

Ձեռնարկողը՝ ***«Ջեթ Սեթ» ՍՊԸ***
Ք. Երևան, Սայաթ Նովա 4, բն.94

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Աբելյան 2/1 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դռնոյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000004

< 23 > 01 2020թ.

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Աբելյան 2/1 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Ջեթ Սեթ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան Աջափնյակ վարչական շրջան

«Ջեթ Սեթ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Աբելյան 2/1 հասցեում հատկացված հողատարածքում կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.197հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման:

Նկարագրական մաս. Տարածքը իրենից ներկայացնում է չկառուցապատված հողամաս, որտեղ նախկինում, համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի, իրականացվել է շինարարական հրապարակ, այդ պատճառով ծառաթփային բուսականությունը բացակայում է: Պատմության և մշակույթի հուշարձաններ, մակերևույթային ջրային ռեսուրսներ չկան, մինչև 35 մետր խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի՝ դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում:

Բնակելի համալիրը կազմված է երկու մասնաշենքերից՝ «Ա» և «Բ», որոնք իրարից անջատված են դեֆորմացիոն կարանով: Համալիրի երկու նկուղային հարկերում նախատեսվում է ավտոկայանատեղի՝ թվով 68 մեքենայի համար: Համալիրի առաջին և երկրորդ հարկը նախատեսված է հասարակական սպասարկման համար: Աջակողմյան մասնաշենքի երկրորդից յոթերրորդ հարկերում նախատեսվում են գրասենյակային տարածքներ, մնացած հարկերում նախատեսվում են բնակարաններ:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողատարածքի մակերես - 1970քմ

Կառուցապատման մակերես - 1196քմ

Բնակարանների ընդհանուր թվաքանակ – 134 բն.

Կանաչապատման մակերես - 567քմ

Ուղղաձիգ կանաչապատում – 575քմ:

Շենքի էլեկտրամատակարարումը՝ 390կՎտ ծախսով, իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի, իսկ ջերմամատակարարումը նախատեսվում է անհատական էլեկտրական սարքերով:

Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են ըստ ժամանակացույցի և օրացուցային գրաֆիկի, որի տևողությունը հաշվարկվել է 29 ամիս:

Որպես շինհրապարակ դիտարկվել է ամբողջ հողատարածքը: Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (29 մարդ) և կազմել է 94.92մ^3/շին.ժամ կամ՝ 0.113մ^3/օր: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 337.5մ^3/շին.ժամ կամ՝ 0.31մ^3/օր: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 432.42մ^3/շին.ժամ: Ջրամատակարարումը իրականացվելու է գոյություն ունեցող ջրատարից, որը կմիացվի համայնքային ջրամատակարարման ցանցին:

Բազմաբնակարան բնակելի շենքի երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 46.000մ^3 ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 41.000մ^3 ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, իսկ մնացած 5000մ^3 կօգտագործվի որպես հետլիցք:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում կենցաղային աղբն է՝ 3192կգ և շինարարական աղբը՝ 320մ^3: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Նոր կառուցվող բնակելի թաղամասի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման

արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված է.

– շինարարական աշխատանքների /փոշու առաջացման աշխատանքներ/ ընթացքում, փոշենստեցման նպատակով, ջրցանի իրականացում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,

– ջրցանը հաշվարկել այնպես, որ չառաջանա մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

– շինարարական գործընթացում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այդ տարածքներում ապահովել սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավել ժամանակակից տեխնիկական միջոցներ,

– օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

– աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

– ծածկված թափքերով բեռնատարներով գրունտի և սորուն նյութերի տեղափոխում (ավազ, խիճ, հող և այլն),

– փոշու տարածումը կանխարգելելու նպատակով՝ սորուն նյութերի ժամանակավոր կուտակումների և շինհրապարակի համապատասխան բարձրությամբ թաղանթով ծածկում,

– շինարարական նյութերը տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,

– մթնոլորտային օդ ՝կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

– տեղումներից առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվելու է շինարարական հրապարակին կից: Այն իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը օգտագործվելու է տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հեռացվելու է որպես շինաղբ,

– աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած թափոնները տեղափոխել ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

– կանաչապատումն իրականացնել համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահատել 350հազ. դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում՝ 1.050.000 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքում կտնկվի թույա ոսկեգույն, թույա սյունաձև, գնդաձև ակացիա, հուդայածառ, մշտադալար սամշիտ,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS
RA YEREVAN

սիրիական վարդ, սիզամարգ, ծաղկանոց: Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ավտոցիստեռներով:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել է քաղաքաշինության նախարարությունը: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ջեթ Սեթ» ՍՊԸ կողմից ներկայացված Աջափնյակ վարչական շրջան, Աբելյան 2/1 հասցեում նախատեսվող կառուցապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Ալեքսանյան